

դէպի յաւիտենական կեանք ժայթքող ջուրը, փրկութեան այս ակերէն, որոնք մեր մօտ են :

Որովհետեւ զորովալի այս մայրական կուրծքէն եւ առաջնորդութենէն հեռացումը սկիզբն ու առաջին արժանան եղաւ այն բոլոր չարիքներուն, որոնք խուժեցին ձեր վրայ (9), կարելի է յուսալ նաեւ որ անոր վերագանալով, նեղութիւնները՝ որոնք ձեզ այժմ կը ճնշեն, կրնան Աստուծոյ օրհնութեամբ իրապէս հեռանալ :

Ուստի, Յարգելի Եղբայր, ժրջանորէն եւ ամբողջ սրտով աշխատէ մղելով, յորդորելով քու բոլոր զաւակներդ հողալու այս փրկաւէտ, կատարեալ միութիւնը, եւ զանոնք հաստատելով անոր մէջ. մի՛ յամենար. որպէսզի կարենաս ընդունիլ իրենց եւ քեզի համար՝ յաւիտենական փառք երկնքի մէջ, եւ, եթէ հաճոյ ըլլայ Աստուծոյ, աւելի խաղաղ եւ հանդարտ դոյալիճակ մը այս կեանքիս մէջ : Մենք երբեք պիտի չզաղբինք այս բանիս համար ընձեռելէ մեր պաշտօնին եւ հեղինակութեան օժանդակութիւնը, յոր-

---

(9) Յ. Քիրտեան քարգումանաձ Է... «Այս մայրական կուրծքէն եւ առաջնորդութենէն ձեր դասալուսմէն ի վեր, ամէն տեսակ չարիք խուժած է ձեր վրայ իրենց առաջին կաղապարէն եւ սկիզբէն» (Հասկ, Անդ, 43) : Բնագրին մէջ եղած radix բառը կաղապար չի նշանակեր, այլ կը նշանակէ արմատ :